

Բուսաբանության պատմությունը և զարգացումը Հայաստանում

Երոյան Ռաֆիկ

Հանգուցային բառեր. բույսեր, ֆլորա, էկոլոգիա, բուսական ռեսուրսներ, բուսաբուծություն, տեսակային բազմազանություն

Հայաստանը դասվում է աշխարհի այն պետությունների շարքին, որտեղ մեր թվարկությունից հազարամյակներ առաջ մշակվել են ժամանակակից մշակաբույսեր՝ ցորեն, գարի, խաղող և այլն, որը հաստատվում է Հայաստանի ներկայիս տարածքում տարբեր ժամանակներում կատարած հնէաբանական ուսումնասիրություններով՝ Երևան (Էրեբունի, Կարմիր բլուր), Վայք (Նորվանք), Գեղարքունիք (Գավառ թաղամաս), Լոռի (քաղաք Վանաձոր) և այսօր ունեն գարգացած բուսականություն: Դրա հետ միասին Հայաստանը ինչպես նախկինում, այնպես էլ այսօր աշխարհում աչքի է ընկել բազմազան և բազմաձև հարուստ բուսականությամբ, որը ուսումնասիրվել է ոչ միայն երկրի բուսաբանների կողմից այլ նաև այն գրավել է արտերկրի բուսաբանների ուշադրությունը: Մխիթար Հերացին ժամանակին նկարագրել է Հայաստանի որոշ դեղաբույսեր: Բույսերի բազմազանությունը գրավել է շատ պատմաբանների հետաքրքրությունը: Ըստ Լիպիցկինի տվյալների՝ Հայաստանի ֆլորայի և բուսականության առաջին հետազոտողներից է եղել ֆրանսիացի բուսաբան Տուրնեֆորը: Նա «Արևելք» կատարած ճանապարհորդության ժամանակ (1700-1702 թթ.) Էրզրում – Ղարս – Թբիլիսի – Երևան – Էջմիածին – Արարատյան դաշտ – Արաքս – Արարատ – Էրզրում երթուղով, ուշադրություն է դարձնում բույսերի ուղղահայաց գոտիականությանը: 1727թ. Անատոլիա Կովկաս ճանապարհորդելիս Հայաստանի ֆլորային ծանոթանում է Ն. Խ. Բուկսբաումը: Հայաստանի շուրջ 30 բուսատեսակ նկարագրել է Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարոտը, որը Հայաստան է այցելել 1829թ.: Հայաստանի բուսական ֆլորայի ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունի բժիշկ բուսաբան Ս. Շարիմանյանը, որը 1818թ. գրաբարով գրել է բուսաբանություն կամ Հայաստանի ֆլորան: Այն պահպանվում է Մատենադարանում: Դրա վրա Շարիմանյանը աշխատել է շուրջ 24 տարի: Դրանում հետաքրքիր տվյալներ են բերված բույսերի ձևաբանության, էկոլոգիայի, աշխարհագրության վերաբերյալ: Առաջին անգամ Շարիմանյանը օգտագործել է հայերեն բուսաբանական տերմիններ: 1820-1828թթ. Կովկասում ճանապարհորդել է Նովիցը, որի մանրամասներին 1973թ. անդրադարձել է Լեւոնդը: Բուսաբանական հետաքրքիր ճանապարհորդություն է կատարել գերմանացի բուսաբան Կ. Կոխը, որը կրկնել է 1843-1844թթ.: Իր աշխատանքներում Կոխը նկարագրել է Կովկասի, այդ թվում Հայաստանի ֆլորան և բուսականությունը և կազմել Կովկասի բուսաբանական քարտեզը: Ըստ Դ. Բ. Սասնովսկու՝ Կոխի աշխատանքը Կովկասում ամենաառաջին երկրաբուսաբանական աշխատանքն է:

1843-1844թթ. Հայաստան է այցելել խոշորագույն բնափորձագետ Մ. Վագնե-

որը, որը բարձրացել է Արարատ և Արագած լեռները: Անդրկովկաս ճանապարհորդել է նաև Ֆ. Ա. Բուզեն: Նա, 1847-1849թթ. ճանապարհորդելով Երևան – Նախիջևան – Թավրիզ երթուղով, ուսումնասիրել է տեղանքի ֆլորան և բուսականությունը: 1855-1856թթ. Հարավային Անդրկովկաս այցելել է Ն.Կ. Ջեյդլիցը, որը հավաքել է շուրջ 2000 բուսատեսակ: Հայաստանի ֆլորայի ու բուսականության վերաբերյալ որոշակի հետաքրքրություն է ցուցաբերել Գ. Ի. Ռադիեն:

Հայաստանի ֆլորայի և բուսականության վերաբերյալ ավելի կոնկրետ և արդյունավետ ուսումնասիրություն են կատարել Կուզնեցովը և Ֆամինը, Ե. Ա. Բուշը, Ն. Ի. Կուզնեցովը, Ա. Ա. Հրոսեյանը, Դ. Ի. Սոսնովսկին, Ն. Ա. Տրոիցկին, Ս. Տ. Տամամշևը, Օ. Մ. Ջեդելմեյերը, Պ. Դ. Յարոշենկոն և ուրիշներ:

Հայաստանի հարուստ բուսականությամբ հետաքրքրվել են Ն. Ի. Վավիլովը, Պ. Մ. Ժուկովսկին և Ռուսաստանի դաշնության շատ գիտնականներ: Ն. Ի. Վավիլովը, այցելելով Հայաստան, ուշադրություն է դարձնում ոչ միայն բուսականության բազմազանությանն ու բազմաձևությանը, այլ նաև դրանց պահպանության և գյուղատնտեսությունում դրանց ներդրմանը: Նա, լինելով Ջրվեժի տարածաշրջանում, նկատում է հացաբույսերի վայրի նախնիների բազմազանությունը և առաջարկում է դրանց պահպանման համար ստեղծել արգելոց, որը իրականացավ 1981թ., երբ հիմնվեց «Էրեբունի» արգելոցը: Նա վայրի բույսերից առաջարկում է շատ վեգետատիվ մասսա ունեցող բույսերը ներառել գյուղատնտեսության մեջ և մշակել հյութայի կեր ստանալու նպատակով:

Արտերկրի բուսաբանների աշխատանքները շարունակել, լրացրել և հարստացրել են հայ բուսաբանները:

Առաջին հայ բուսաբան՝ Ա. Ա. Քալանթարը 1888թ. նկարագրել է Արարատ լեռան հարակից ամառային մարգագետինները և սովել դրանց արդյունավետ օգտագործման ուղիները:

Բուսաբանության վերաբերյալ հիմնարար ուսումնասիրություններ կատարվել են ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտում և հանրապետության համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների բուսաբանության ամբիոններում:

ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտը հիմնվել է 1938թ.: Բուսաբանական գիտության ձևավորման առաջին օջախը եղել է բնագիտության պատմության թանգարանի հերբաբոլումը, որն ստեղծել է Ա. Բ. Շելկովնիկովը: Նա եղել է զինվորական և զբաղվել է ֆլորիստիկական յուրահատուկ ուսումնասիրություններով: 1922թ. նա ստեղծում է բնագիտապատմական թանգարան, որի համար հիմք է ծառայել Հյուսիսային Հայաստանից (Լոռի) հավաքած բույսերի հավաքածուի հերբաբոլումը և կենդանաբանական հավաքածուն: Բուսաբանության ինստիտուտում ստեղծվում են Վանաձորի և Սևանի հենակետերը: Ինստիտուտում ձևավորվում են բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության, երկրաբուսաբանության և էկոլոգիայի, ֆիզիոլոգիայի, Հայաստանի ֆլորայի ուսումնասիր-

ման բաժինները, ստեղծվում է անտառագիտության խումբը, որի կազմում ընդգրկվում է Մարտունու անտառամելիորատիվ ջոկատը, ստեղծվում են սնկաբանության, դենդրոլոգիայի և ծաղկաբուծության, ջերմոցային տնտեսության ճյուղերը: Լուրջ աշխատանքներ են տարվում կենսաբազմազանության պահպանման ուղղությամբ: Բուսաբանության ինստիտուտի ուսումնասիրություններից նախապատվություն է տրվում ֆլորայի, բուսականության, բուսական ռեսուրսների, բնական լանդշաֆտների արդյունավետության բարձրացման խնդիրներին, մշակվում են բարձրակարգ բույսերի օժտոգենեզի ֆիզիոլոգիական հիմունքները, խորացվում են ինտրոդուկցիայի և ակլիմատիզացիայի ու բնակավայրերի կանաչապատման վերաբերյալ ուսումնասիրությունները:

Կենսաբազմազանության ուսումնասիրության համար մեծ ուշադրության է արժանի ինստիտուտի հերբարիումային բազայի ստեղծումը, որը 2007թ. տվյալներով կազմել է 500.000 անուն բույս:

Աշխարհում նմանը չունեցող Հայաստանի ֆլորայի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները արտացոլված են, «Հայաստանի ֆլորայի» հատորներում, որտեղ ընդգրկված են շուրջ 3200 անթափոր բույսեր; Այն բուսաբանության ինստիտուտի գիտաշխատողների քրտնաջան աշխատանքի արդյունքն է: Այդ առումով գնահատելի է կոլեկտիվի կողմից բույսերի «Կարմիր գրքի» ստեղծումը և հրատարակումը: Որոշակի աշխատանք է կատարվել Սևանի լճից ազատված տարածքների անտառապատման և կայուն բազա ստեղծելու ուղղությամբ:

Երևանի բուսաբանական այգու ծառերի հավաքածուում հաշվում են շուրջ 1100, Վանաձորում՝ 600, Սևանում՝ 450 տեսակ, Այգու ջերմատներում ժամանակին եղել է 1260 արևադարձային և մերձարևադարձային բուսատեսակներ:

Բուսաբանության ինստիտուտում կատարված ուսումնասիրությունների արդյունքում ինստիտուտի պուրակներում 943 բույսերի վրա հայտնաբերվել է 1000 սնկի տեսակ: Պարզվել է, որ շատ բույսերի սերմերի չծլելը և բույսերի չորանալը պայմանավորված է արմատի շուրջ աճող սնկերով: Ժամանակին կանաչաշինության համար առաջարկել են 420 ծառ և թուփ, 200-ից ավել ծաղիկ:

Բուսաբանության ինստիտուտում կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժ. Հ. Վարդանյանի նախագահությամբ գործում է 035 ծածկագրով «Բուսաբանություն» մասնագիտական խորհուրդը, որը գիտական աստիճաններ է շնորհում և մեծ աշխատանք է կատարում հանրապետությունում բուսաբաններ պատրաստելու ուղղությամբ: Մակայն վերջին տարիներին պակասել է գիտության նկատմամբ երիտասարդների ձգտումը, որի համար էլ հանրապետությունում զգացվում է մասնագիտական բարձր մակարդակ ունեցող երիտասարդ բուսաբանների մեծ կարիք:

Հայաստանում բուսաբանության զարգացմանը նպաստել են նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀԱԱՊՀ, ՎՊՀ և շատ կա-

ռույցներ: Այդ բուհերում ստեղծվել են բուսաբանության ամբիոններ, որտեղ և տարվել են գիտահետազոտական խորը ուսումնասիրություններ բուսաբանության տարբեր բաժինների վերաբերյալ: Ներկայումս բուհերում բուսաբանության ամբիոնը պահպանվել է միայն Երևանի պետական համալսարանում, որտեղ մեծ զարգացում է ապրել հատկապես սնկաբանությունը: Մյուս բուհերում բուսաբանության ամբիոնը ներառվել է կենսաբանության ամբիոններում:

Այսպիսով՝ Հայաստանում բուսաբուծությունը և բուսաբանությունը ունի շատ հին պատմություն, որը պայմանավորված է հայ բուսաբանների հազարամյա գիտական գործունեությամբ: Հայաստանում կատարած բուսաբանության բազմաբնույթ հետազոտությունները ներդրվել են աշխարհի շատ երկրներում և նպաստել բուսաբանական գիտության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղոյան Ռ. Հ., Իմունասելեկցիա սերմնաբուծություն, Ե., 2017, 308 էջ:
2. Սիմոնյան Ռ. Բուսաբանություն, բույսերի անատոմիա և մորֆոլոգիա (Ուսումնական ձեռնարկ), Ե., 2015, 271 էջ:
3. Մաթևոսյան Ա. Ա., Բուսաբանություն, Ե., «Լույս» հրատարակչություն, 1977, 567 էջ:
4. Վարդանյան Չ. Ս., Կենդանի օրգանիզմների զարգացման կենսաբանություն (Դասագիրք «Կենսաբանություն» մասնագիտության ուսանողների համար) Ոսկան Երևանցի, Ե., 2017, 232 էջ:
5. Актуальные проблемы ботаники в Армении. Материалы международной конференции (6-9 октября 2008г., Ереван), Е., 2008, с. 5-41.
6. Васильев А. Е., Воронии Н. С., Еленевский А. Г., Серебрякова Т. И., Ботаника. М., «Просвещение», 1978, 478 с.
7. Зироян А. Н., Григорян Арц. А., Семенное и вегетативное размножение некоторых травянистых многолетников флоры Армении. Бюлл. Бот. сада АН Арм. ССР, 1988, 29, с. 92-103.
8. Жуковский П. М. Ботаника, М., Высшая школа, 1964, 617 с.

История и развитие ботаники в Армении

Едоян Рафик

Резюме

Ключевые слова: растение, флора, экология, травяные ресурсы, растениеводство, видовое разнообразие

Ботаника и растениеводство в Армении развивались до нашей эры. В работе отмечено, что Армения в прошлом и в настоящее время имеет многообразную растительность, изучением которой занимаются ботаники нашей страны и зарубежные ученые. В работе дана история развития ботаники. Первым исследователем флоры и растительности Армении был французский ботаник Ж. Турнефор. В дальнейшем, развитие ботанической науки связано с НАН РА, а также, с созданием в вузах кафедры ботаники. В работе приведены данные о результатах теоретических и практических исследований всемирно известных ученых, таких как: А. Л. Тахтаджян, М. Л. Чайлахян, В. Г. Казарян. Вкратце изложены результаты исследований известных за рубежом ученых-армян, таких как: Л. Л. Осипян, Э. Ц. Габриелян, С. Г. Нагагулян, Л. Ж. Арутюнян, Г. М. Файвуша, А. Н. Зироян и других.

В Армении развиваются все направления ботаники: растительная ресурсология, систематика, география, экология, физиология, биологическая продуктивность, безопасность сырья диких полезных съедобных и овощных растений и т. д.

В Армении ботаника имеет вековую историю развития и дала всемирно известных ученых.

The History and Development of Botany in Armenia

Edoyan Rafik

Summary

Key words: herb, flora, ecology, herbal resources, plant growing, species diversity

Botany and plant growing in Armenia developed before our era. It is mentioned in the article, that from past to present, Armenia has multiform and various rich vegetation, which has been studied by many well-known botanists in the country and abroad. Here is given the history of the development of botany. One of the first researchers of the flora and fauna of Armenia was French botanist Turnefor. Then the development of botany is connected with RA NAS botany and chairs of botany in higher education institutions. There is shown the theoretical and practical concepts of scientific research of world famous botanists, such as A. Takhtajyan, M. L. Chaylakyan, V. H Ghazaryan's. There are briefly presented the results of the studies of today's famous Armenian botanists, who live abroad, such as L.L. Osipyas, E. Th. Gabrielyan, S. C. Nangulyan, L. V. Harutyunyan, G. M. Faywhush, A. N. Ziroyan and many others results of studies. It turns out that all sections of botanism, vegetarian resources, discipline, diversity, geography, ecology, physiology; plant sustainable development, biological effectiveness; wildlife nutrition and vegetable raw material safety have been developed in Armenia.

Botany in Armenia has a history of centuries and has given the world many prominent botanists.